



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵՂՈՆԸ

Ընդառաջելով Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան վարչութեան հրաւերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 13 Ապրիլի երեկոյեան այցելեց միութեան նորակառոյց կեդրոնը եւ դիմաւորուեցաւ Խնամակալ Մարմինին, կեդրոնական վարչութեան, ու յարակից միաւորներու ներկայացուցիչներու կողմէ: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները՝ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան, Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան եւ Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան ու անդամներ՝ Տեարք Վահան Պզտիկեան եւ Խաչիկ Երեցեան:

Առաջնորդ Սրբազանն ու ընկերակիցները շէնքի մուտքին դիմաւորուեցան Խնամակալ Մարմինի ատենապետ Վահան Կրեկըրի, Կեդր. Վարչութեան ատենապետ Տիար Նժդէի Փիրաճանեանի, եւ այլ վարչականներու կողմէ: Առաջին հերթին, հիւրընկալները Առաջնորդ Սրբազանն ու ընկերակիցները ծանօթացուցին կառոյցին ներքին բաժանմունքներուն, ուր տեղի կ'ունենան միութեան բազմերես ու բեղուն աշխատանքներն ու ծրագրումը:

Այնուհետեւ, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն: Ողջոյնի խօսքեր արտասանեցին Վ. Կրեկըր, Տեարք Ն. Փիրաճանեան եւ այլ ներկայացուցիչներ, որոնք անդրադարձան միութեան գործունեութեան զանազան երեսներուն: Խօսք առին Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան եւ Առաջնորդ Սրբազանը: Տիկին Ռ. Պօղոսեան գնահատանքով արտայայտուեցաւ այս կեդրոնի իրականացման ու Իրանահայ Միութեան բեղուն գործունեութեան մասին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին բարձր գնահատելով միութեան պատասխանատուներուն ու անդամներուն նուիրեալ աշխատանքը, շնորհաւորեց նորակառոյց շէնքին իրականացումը, նկատել տալով, որ »այս յարկին տակ բոլորս կը զգանք մեր տան պէս«: Ան յիշեց Սուրբ Գրային այն նկարագրութիւնը, ուր կ'ըսուի թէ «Եթէ մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամները ալ միասին կը ցաւին, իսկ եթէ մէկ անդամը պատուընդի՝ բոլոր անդամներն ալ միասին կ'ուրախանան», իսկ այս պարագային, երբ մեր գաղութի մէկ անդամը ուրախ է, ամբողջ մեր օճախը ցնծութիւն կ'ապրի:

Սիրալիր ու մտերմիկ մթնոլորտի մեջ տեղի ունեցած հանդիպումը վերջ գտաւ փոխադարձ գործակցութիւնը աւելի եւս ամրապնդելու յանձնառութեամբ:

## **PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEMBERS VISIT THE NEW CENTER OF THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES**

Upon the invitation of the Armenian Society of Los Angeles board, on Wednesday, April 13<sup>th</sup>, 2011 H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council members visited the new center of the organization. The Prelate was joined by Pastors of St. Mary's Church Rev. Fathers Vazken Atmajian, Ardak Demirjian, and Gomidas Torossian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and members Mr. Vahan Bezdikian and Mr. Khatchig Yeretjian.

Upon their arrival the Prelate and guests were greeted by Board of Trustees Chair Mr. Vaughn Gregor, Board of Directors Chair Mr. Njteh Pirajanian, and board members.

Following a tour of the headquarters, a reception was held. Welcoming remarks were delivered by Mr. Gregor, Mr. Pirajanian, and board representatives. Mrs. Rima Boghossian delivered her remarks, in which she commended the organization's members for their service and especially their hard work in attaining their dream of a new headquarters.

The Prelate also commended the dedication of the members and congratulated them on their new headquarters saying that "here we feel as if we are in our own home". Citing the passage from 1 Corinthians 12:26 that says, "And if one member suffers, all the members suffer with it; or if one member is honored, all the members rejoice with it", the Prelate noted that the community shares in the joy of this accomplishment.

The visit concluded with a mutual assurance to continue and strengthen collaborative efforts.